Հաստատում եմ 01.09.22թ.

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐԻ

ԴԱՍՏԻԱՐԱՁԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԱՐԵԿԱԿԱՆ ՊԼԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Նախապատրաստվել Գիտելիքի օրվա միջոցառմանը:
2. Հետևել, որ կահավորվեն և պահպանվեն սանիտարահիգենիկ պայմանները դասասենյակներում:
3. Օգնել դասղեկներին և գրադարանավարին դասագրքերի բաշխման, փոխանակման աշխատանքները կատարելու ընթացքում:
4. Տնօրենի և բուժքրոջ հետ միասին հսկել և լինել հետևողական, որպիսի դասերը սկսվելուց առաջ և դասերից հետո բոլոր դռները, պատուհանները, սեղանները, աթոռները, գրատախտակները և սանհանգույցները ախտահանվեն:
5. Հրավիրել դասղեկների և դասվարների խորհրդակցություն: Հանձնարարել բոլոր դասղեկներին 08 [30] լինեն դպրոցում: Աշակերտների բացակայության պատճառը ճշտել ծնողներից և տեղյակ պահել տնօրինությանը:
6. Օգնել դասղեկներին ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում, քննարկել և հաստատել նրանց աշխատանքային պլանները:
7. Ծանոթանալ առաջին դասարանցիների հետ: Դասվարի հետ միասին զրուցել աշակերտների ծնողների հետ, կազմել ծնողազուրկ, բազմազավակ, հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաների անվանացանկ:
8. Վերահսկել հերթապահ ուսուցիչների կողմից առավոտյան իրականացվող միջոցառումները՝ պատշաճ կերպով կազմակերպելու սովորողների մուտքը դպրոց:
9. Սիստեմատիկ կատարել հաճախումների հաշվառում, պարզել այս կամ այն պատճառով հսկողությունից դուրս մնացած աշակերտների հարցը, նրանց դպրոց չհաճախելու պատճառը: Ուշադրություն դարձնել աշակերտնների արտահագուստին:
10. Դպրոցի դահլիճում անցկացնել աշակերտական խորհուրդի ժողով, ձևավորել ընտրական հանձնախումբ: Հրավիրել աշակերտական խորհուրդի նիստ, ընտրել դպրոցի աշակերտական խորհուրդի նոր նախագահ: Աջակցել և ուղղորդել աշակերտական խորհուրդի աշխատանքները:
11. Դպրոցի դահլիճում անցկացնել ծնողական ժողով, լսել ծնողխորհրդի և նախագահի կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Անցկացնել ծնողխորհրդի նիստ, ընտրել ծնողխորհրդի նախագահ:

12. Հոգեբանի, լոգոպեդի, ուսումնական գծով փոխտնօրենի և ուսուցչի օգնականների հետ միասին բացահայտել կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող երեխաներին (դիտարկել, հետազոտել և գնահատել) :
13. Բուժքրոջ հետ միասին սիստեմատիկ կազմակերպել դասասենյակների սանիտարահիգիենիկ ստուգումներ:
    Անցկացնել զրույցներ արտակարգ իրավիճակների մասին, որպիսի երեխաների տարհանումը դպրոցական շենքից ճիշտ և արագ կազմակերպվի:
14. Ձեռնարկել միջոցներ սոցիալապես խիստ անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար (գեղչել դասագրքերի վարձավճարները, գտնել հովանավորներ):
    Ստուգել դասագրքերի, տետրերի վիճակն ու առկայությունը (5-12-րդ դասարաններում):
15. Կրթության առնձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար ստեղծել հավասար պայմաններ: Տնօրինության հետ միասին օգնել և աջակցել նման երեխաներին:
16. Կազմել դժվար դաստիարակվող և սոցիալապես անապոհով ընտանիքների երեխաների անվանացանկ և նրանց հետ տարվող աշխատանքային պլան: Վերահսկել կարգապահական կանոնները:
17. Կազմել դժվար դաստիարակվող աշակերտի հետազոտման քարտ, հոգեբանի հետ միասին բացահայտել շեղված վարքագծի պատճառները, որպիսի հիմք հանդիսանա հետագա կանխարգելիչ և շտկողական աշխատանքների համար:
18. Անհարկի բացակայությունները և ուշացումները բացառելու նպատակով սահմանել խիստ վերահսկողություն և հետևողականություն, աշխատանք տանել աշակերտների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ:
19. Մշտապես կապ պահպանել ՆԳ բաժնի անչափահասների տեսչության աշխատակիցների հետ: Ուշադրության կենտրոնում պահել դաերից փախչող, հաճախակի բացակայող և դժվար դաստիարակվող աշակերտներին: Կազմակերպել անհատական աշխատանքներ խնդրահարույց աշակերտների հետ:
20. Ամիսը մեկ անգամ անցկացնել դասղեկների խորհրդակցություն, քննարեկել տվյալ ամսվա կատարված աշխատանքների արդյունքները, լսել դասղեկների հաշվետվությունը՝ աշակերտների հաճախումների և վարքի վերաբերյալ, ներկայացնել հաջորդ ամսվա անելիքները:
21. Աջակցել ծնողխորհրդի նախագահի ծնողխորհրդի նիստերը ժամանակին անցկացնելու համար:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Զրույցների և քննարկումների միջոցով սովորողների մեջ ձևավորել ազգային եկեղեցուն ու քրիստոնեական դավանանքին հավատարիմ մնալու պատասխանատվություն:
- Սովորողներին իրազեկ դարձնել ազգային-եկեղեցական տոներին. <<Քրիստոսի ծնունդը>>, <<ԶԱՏԻԿ>>, <<Տյառնընդառաջ>>, << Սուրբ խաչ>> և այլն: Նշել կրոնի դերը ժողովրդի կյանքում:
- Սովորողների զերծ պահել աղանդավորական շարժումներից, հակաքրիստոնեական գործուեությունից ու քարոզչությունից:
- Աշակերտներին ծանոթացնել մեր երկրի հոգևոր արժեքներին, հնարավորության դեպքում կազմակերպել էքսկուրսիաներ դեպի մեր երկրի պատմամշակութային վայրեր, նրանց մեջ ձևավորել և զարգացնել հետաքրքրություն մեր երկրի հոգևոր արժեքների նկատմամբ:

2. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Սովորողների գիտակցությանը հասցնել ազգային բանակի դերը մեր երկրի խաղաղության պահպանման ու թշանու ոտնձգություններից պաշտպանման գործում:
- Անցկացնել հայրենասիրական թեմայով զրույցներ, բանավեճեր <<Ես Հայ եմ >>, <<Հայի ոգին անպարտելի է >>, <<Խաղաղության գինը>>: Ձևավորել առանձնահատուկ վերաբերմունք պետության, պետական խորհրդանիշների նկատմամբ:
- Տղաների մեջ ձևավորել հայրենիքին հավատարմորեն ծառայելու պատրաստակամություն, կազմակերպել զրույցներ ազգային բանակի և ազգային արժանապատվության մասին:
- Դասղեկի ժամերին աշակերտներին հանձնարարել գրել շարադրություն <<Խաղաղության գինը>>, <<Սպասում ենք տղերք>> թեմաներով: Անցկացնել շարադրության մրցույթ:
- Ձևավորել պատի թերթեր, կազմակերպել առցանց միջոցառում ՀՀ բանակի կազմավորման 31 ամյակի առթիվ :
- Կազմակերպել երթ՝ նվիրված Մեծ եղեռնին և շքերթ՝ նվիրված Մայիսի 9-ին:
- Կազմակերպել հանդիպում Արցախյան պատերազմի մասնակիցների հետ:

3. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Սովորողների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ, գեղագիտական արժեքները կարևորելու, գեղեցիկը, բարին ու ճշմարիտը գնահատելու դրանք պահպանելու վերաբերմունք:
- Կազմակերպել քննարկում <<Արվեստի ո՞ր տեսակն է ձեզ հոգեհարազատ>> թեմայով: Սովորել գեղեցիկը հասկանալու, գնահատելու և դրան ձգտելու կարողություն:
- Ապրիլի 7-ին և Մարտի 8-ին նվիրված անցկացնել շարադրության մրցույթ <<Ամենաթանկ էակ՝ մայրիկ>>, թեմայով: Ձևավորել պատի թերթեր, գրել թեային համապատասխան ստեղծագործություններ:
- Անցկցնել գրքի քննարկումներ:
- Կազմակերպել <<Բերքի տոն>> խորագրով միջոցառում, որը ավելի կնպաստի աշակերտների գեղագիտական զարգացմանը:
- Կազմակերպել զրույցներ և քննանկումներ հետևյալ թեմաներով <<Արվեստը իմ պատկերացմամբ>>, <<Ժամանակակից արվեստը Հայաստանում>>:

4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Հետևել, որ սովորողները մշտապես հոգ տանեն իրենց առողջության մասին, կարևորել մարմնակրթության դերը, առավոտյան մարմնամրզկան վարժություններ կատարեն, խնայեն սեփական մարմինը, ակտիվորեն մասնակցեն սպորտային միջոցառումներին:
- Հետևել սովորողների առողջ ապրելակերպին, մշտապես համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ:
- Աշակերտների գիտակցությանը հասցնել ամենօրյա նախավարժանքի կարևորությունը առողջության համար: Անցկացնել զրույց <<Առողջ մարմնում, առողջ հոգի>> թեմայով:
- Անցկկացնել դասալսումները ֆիզկուլտուրայից, օգնել և խրախուսել ուսուցիչներին դասերն ավելի հետաքրքիր և արդյունավետ անցկացնելուն:
- Տարրական դասարաններում հաճախակի կազմակերպել սպորտլանդիաներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Սովորողների մեջ ձևավորել ինքանասպասարկման ինքուրույնության վերբերմունք: Նրանց ներգրավվել դպրոցի բակի բարեկարգման և մաքրման աշխատանքներրին:
- Կյանքից քաղած օրինակների հիման վրա աշակերտների գիտակցությանը հասցնել աշխատանքի կարևորությունն ու նշանակությունը, անցկացնել զրույց <<Աշխատանքն է գեղեցկացնում մարդուն>> թեմայով;
- Հտևել, որ սովորողները վերանորոգեն պատռված դասագրքերը: Երեխաների համար սկզբունք դարձնել <<Աշխատանքը մայրն է ամեն բարիքի>> ասույթը: Կազմակերպել դպրոցամերձ տարածքի մաքրում:
- Խրախուսել սովորողների ձեռքի աշխատանքը, բացահայտել հմուտ ձեռքեր ունեցողներրին, շնորհալիներին: Հայտարարել լավագույն ձեռքի աշխատանքի մրցույթ:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Զրույցների միջոցով սովորողների մեջ ձևավորել բնությունը սիրելու և պահպանելու, շրջակա միջավայրը էկոլոգիապես մաքուր պահելու պատրաստակամություն:
- Սերմանել աշխատասիրություն, սեր հայրենի բնության և հոգածություն կանաչ տարածքների հանդեպ:
- Սովորողների գիտակցության հասցնել բնության էկոլոգիական մաքրության պահպանման կարևորությունը մեր կյանքում: Անցկացնել հարցում <<Ինչպե՞ս պայքարել բնության աղտոտվածության դեմ>>:
- Ակտիվորեն մասնակցել շրջապատը կանաչապատելու աշխատանքներին, խրախուսել ակտիվ մասնակիցներին:
- Աշակերտների օգնությամբ մաքրել քաղաքային հուշարձանների հարակից տարածքները:

7. ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- Անցկացնել զրույցներ առողջ ապրելակերպի մասին. <<Թմրամիջոցն ու նրա պատշճառած վնասը>>, <<Ծխելու հետևանքները>>:
- Կազմակերպել տեսաֆիլմերի դիտում, որոնք կվերաբերվեն սեռական և իրավական դաստիարակությանը. <<Թրաֆիքինգ>>:
- Դասղեկի ժամերին խոսել սովորողների վարքի կանոնների, իրավունքների ու պարտականությունների մասին:
- Հետևել դեռահասների սեռական դաստիարակությանը, անհարաժեշտության դեպքում զրուցել ծնողների հետ:
- Զրուցել <<Հանդուրժողականության և քաղաքավարության>> թեմայով: Իրականացնել բարոյահիրավական գիտակցության ձևավորության ուղղությամբ տարվող միջոցառումներ (զրույցներ լավագույն մարդկանց մասին, բանավեճեր, կինոդիտումներ ու քննարկումներ):
- Մշտապես կապ պահպանել ՆԳ բաժնի մանկական տեսուչի և աշխատակիցների հետ՝ դժվար երեխաների դաստիարակչական խնդիրները ժամանակին լուծելու համար:

8. ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ, ԴՊՐՈՑ - ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

- Սովորողների կրթության և դաստիարակության գործը պատշաճ կերպով կազմակերպելու նպատակով սերտ կապի մեջ լինել ծնողների հետ, ծանոթանալ յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկություններին ու նախասիրություններին:
- Անհրժեշտության դեպքում այցելել աշակերտների տները, ծանոթանալ նրանց սոցիալական պայմաններին,, զրուցել ծնողների հետ:
- Ապահովել սերտ կապը դպրոցի ուսուցիչների և ծնողների միջև: Անցկացնել զրույցներ հետևյալ թեմաներով <<Հոր դերը երեխայի կյանքում>>:
- Սերտ կապ ունենալ դասերից հաճախակի բացակայող ուշացող ծնողների հետ, համգործակցային աշխատանքների միջոցով կանխել դրանք:Հետևողական և բացատրական աշխատանքների միջոցով ապահովլ բարձր առաջադիմություն և օրինակելի վարք:

<u>Դպրոցի տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ՝ Գոհար Խաչատրյան</u>